- **Հիփոթեքային վարկեր**

| | |
|---|---|
| **Անվանում** | **Ազգային Հիփոթեքային Ընկերություն / ԱՀԸ / ՎՎԿ ՓԲԸ - ի վերաֆինանսավորման ծրագրի շրջանակներում անշարժ գույքի կառուցապատման համար տրամադրվող վարկ** |
| **Տեսակ** | Հիփոթեք |
| **Նպատակ** | Բնակելի անշարժ գույքի կառուցապատում |
| **Գումարի չափ/միջակայք** | **5,000,000 - 35,000,000 ՀՀ դրամ (փուլային , առնվազն երկու փուլ, վերջին փուլի գումարը պետք է կազմի ընդհանուր գումարի 20%)** |
| **Արժույթ** | ՀՀ դրամ |
| **Ժամկետ** | 120-180 ամիս |
| **Վարկի անվանական տոկոսադրույք՝** | **12.4%** |
| **Վարկի փաստացի տոկսադրույք** | **13.62%-13.73%** |
| **Փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգ** | $A = \sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$ [1] |
| **Անվանական տոկոսադրույքի փոփոխման կարգ և պայմաններ՝ նախատեսելու դեպքում** | չի սահմանվում |
| **Պարտադիր վճարման ենթակա վճարների ցանկ և դրանց չափ/միջակայք** | Վարկային հայտի ուսումնասիրման համար՝ 5 000 ՀՀ դրամ: |
| **Երրորդ անձանց կողմից մատուցվող օժանդակ ծառայություններ** | Անշարժ գույքի գնահատում, ապահովագրություն |
| **Վարկի հասանելիությունը սահմանափակող բոլոր պայմանները** | Բացասական վարկային պատմություն, անբավարար եկամուտներ |
| **Մարումների հաճախականություն** | անուիտետային |
| **Մարումների եղանակ** | ամսական |
| **Ապահովության (գրավի) տեսակ** | անշարժ գույք |
| **«վարկ հարաբերած գրավի արժեք»** | 70% |
| **Ապահովագրության պահանջի առկայություն** | այո |
| **Նվազագույն կանխավճար /արժեք** | - |

| | |
|---|---|
| **Տույժերի կիրառման դեպքերը և չափը** | երկու և ավելի հաջորդող աշխատանքային օր ժամկետանցի դեպքում ժամկետանց գումարի 2%-ի չափով միանվագ տույժ |
| **Վարկի գումարի տրամադրման եղանակներ** | անկանխիկ |
| **Վարկի վաղաժամկետ մարման հնարավոր դեպքերը և պայմանները** | Հնարավոր է՝ առանց տույժերի |
| **Վարկի ձևակերպման վայր** | Մասնաճյուղ |
| **Որոշման կայացման և որոշման մասին տեղեկացնելու առավելագույն ժամկետ** | Որոշման կայացման առավելագույն ժամկետ - 4 օր<br>Որոշման մասին տեղեկացնելու առավելագույն ժամկետ - 1 օր |
| **Վարկը սպառողի տրամադրելու կարգ և ժամկետ** | Պայմանագիրը պետական գրանցում ստանալուց 1 օր հետո |
| **Դրական որոշման գործոններ** | Ոչ բացասական վարկային պատմություն, կայուն եկամուտներ, առավելագույն OTI 45% |
| **Բացասական որոշման գործոններ** | Բացասական վարկային պատմություն, անբավարար եկամուտներ |
| **Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ** | Վարկառուի կողմից ներկայացվող փաստաթղթեր.<br>1. Դիմում /սահմանված ձևով/,<br>2. Անձնագիր կամ նույնականացման քարտ,<br>3. Սոցիալական քարտ,<br>4. Ամուսնության վկայական /եթե վարկառուն ամուսնացած է/,<br>5. Երեխաների ծննդյան վկայականները /առկայության դեպքում/,<br>6. Տեղեկանք բնակության վայրից /3-րդ ձև ԲՇՏ-ից/,<br>Եթե վարկառուն վարձու աշխատող է, ապա.<br>7. Եկամուտների մասին տեղեկանք գործատուից, որտեղ նշվում է վարկառուի զբաղեցրած պաշտոնը, աշխատանքային ստաժը տվյալ կազմակերպությունում և ամսական եկամտի չափը<br>8. Տվյալներ նախկին զբաղվածության մասին՝ գործատուն, զբաղեցրած պաշտոնը, յուրաքանչյուր կազմակերպությունում աշխատանքի ստաժը /պահանջվում է միայն այն դեպքում, եթե վարկառուի աշխատանքային ստաժը ընթացիկ աշխատավայրում փոքր է 12 ամսից և դա նրա առաջին աշխատավայրը չէ/.<br>9. Տվյալներ այլ եկամուտների վերաբերյալ /առկայության դեպքում/,<br>10. Վարկառուի ամուսնացած լինելու դեպքում ամուսնու/կնոջ եկամուտների մասին տեղեկանք ոչ պարտադիր/,<br>Եթե Վարկառուն ինքնազբաղված է, ապա.<br>11. Հարկ վճարողի հարկային համարը /ՀՎՀՀ/,<br>12. Գրանցման վկայական, կանոնադրություն /առկայության դեպքում/,<br>13. Գործունեության տվյալ տեսակով զբաղվելու թույլտվության փաստաթղթերը, եթե օրենսդրության համաձայն տվյալ |

| | |
|---|---|
| | գործունեության համար անհրաժեշտ է համապատասխան մարմինների կողմից հատուկ թույլտվություն,<br>14. Վերջին 1 տարվա ֆինանսական և հարկային հաշվետվությունները՝ հաստատված հարկային մարմինների կողմից,<br>15. Վերջին 12 ամսվա եկամուտների և ծախսերի հաշվետվությունները /գրառումները /առկայության դեպքում/<br>16. Ինքնազբաղվածների եկամուտների գնահատման վերլուծություն համաձայն ՈՆՍ-ի Հավելված 1-ում ներկայացված ինքնազբաղվածների եկամուտները գնահատելու մեթոդաբանության կամ ԳՖՀ կողմից սահմանված համանման մեթոդաբանության /վերլուծությունը կատարվում է Վարկատուի կողմից և ներկայացվում այնպես, որ առանց որևէ դժվարության հասկանալի լինին 3-րդ անձի համար/,<br>Այն դեպքերում, երբ վարկառուն/համավարկառուն միևնույն ժամանակ հանդիսանում է տվյալ կազմակերպության հիմնադիրը /սեփականատերը/ և տնօրենը /գործադիր մարմնի ղեկավարը/, ապա վերջինիս եկամուտները պետք է գնահատվեն Հավելված 1-ում ներկայացված մեթոդաբանությամբ, հակառակ դեպքում, եթե նա ներկայացնում է աշխատավարձի վերաբերյալ տեղեկանք, ապա տեղեկանքում նշված գումարը պետք է հավաստվի ներքոթվարկված տարբերակներից որևէ մեկով.<br>• Կազմակերպության պաշտոնական՝ հարկային մարմինների կողմից հաստատված հաշվետվությունների վերլուծության միջոցով, կամ<br>• ՀՀ Սոցիալական ապահովության ծառայությունից համապատասխան տեղեկանքի միջոցով:<br>17. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է սպառողից «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ սպառողին:<br>Գույքի վեաբերյալ փաստաթղթեր.<br>18. Հողամասի սեփականության վկայական,<br>19. Կառուցապատման թույլտվությունը,<br>20. Կառուցման օրենքով սահմանված կարգով հաստատված նախագիծը,<br>21. Կատարվելիք ծախսերի նախահաշիվ,<br>22. Կառուցապատման փուլերի նախագիծ /սահմանված ձևով/: |
| | |